

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
24 մայիսի 2017 թ.  
Պետական գրանցման թիվ 10617208

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

17 մայիսի 2017 թ.

N 129-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 268-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

### Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների ցանկը հաստատելու մասին» N 268-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 242-րդ, 243-րդ, 244-րդ, 245-րդ, 246-րդ, 247-րդ, 248-րդ, 249-րդ, 250-րդ, 251-րդ, 252-րդ և 253-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ.

242.	Թռչունների Նյու-Զասլ, ինֆեկցիոն բրոնխիտ և ձվատվության նվազեցման համախտանիշ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված, էմուլգացված ՕԼՎԱԿ Ա+Բ (OLVAC A+B) պատվաստանյութ	Իտալիա	«Փատրո Ս.պ.Ա.» կազմակերպություն
243.	Թռչունների Նյու-Զասլ, ինֆեկցիոն բրոնխիտ, ինֆեկցիոն բուրսալ հիվանդությունների և ռեովիրուսային (տենոսինովիտ) վարակի նկատմամբ ակտիվազրկված, էմուլգացված ՕԼՎԱԿ Բ+Գ+Ռ (OLVAC B+G+R) պատվաստանյութ	Իտալիա	«Փատրո Ս.պ.Ա.» կազմակերպություն
244.	Թռչունների ինֆեկցիոն բուրսալ հիվանդության նկատմամբ կենդանի ԻԲԱ-ՎԱԿ ՍՏ (IBA-VAC ST) պատվաստանյութ	Իտալիա	«Փատրո Ս.պ.Ա.» կազմակերպություն

245.	Թռչունների ինֆեկցիոն բուրսիտի կենդանի, թուլացված B87 շտամի Ցիվակ IBD (Cyvac IBD) պատվաստանյութ	Չինաստան	«Անհուի Դիվինիթի Բիոլոջիկալ Փրոդուքթս Բո. ԼՏԴ» կազմակերպություն
246.	Թռչունների կոմբինացված Նյու-Բալ և ինֆեկցիոն բրոնխիտ հիվանդությունների նկատմամբ կենդանի LaSota և H120 շտամի Ցիվակ ND+IB (Cyvac ND+IB) պատվաստանյութ	Չինաստան	«Անհուի Դիվինիթի Բիոլոջիկալ Փրոդուքթս Բո. ԼՏԴ» կազմակերպություն
247.	Թռչունների Նյու-Բալ հիվանդության նկատմամբ կենդանի, թուլացված LaSota շտամի Ցիվակ ND (Cyvac ND) պատվաստանյութ	Չինաստան	«Անհուի Դիվինիթի Բիոլոջիկալ Փրոդուքթս Բո. ԼՏԴ» կազմակերպություն
248.	Թռչունների ինֆեկցիոն բուրսալ հիվանդության նկատմամբ կենդանի, լիոֆիլիզացված Պուլվակ Բուրսա Պլուս (Poulvac Bursa Plus) պատվաստանյութ	Իսպանիա	«Չոետիս Մանուֆակտուրինգ և Ռեսերչ Սայենս, Ս.Լ.» կազմակերպություն
249.	Իմունոդիֆուզիոն եղանակով բրուցելյոզի ախտորոշման թեսթ-համակարգ	Ռուսաստանի Դաշնություն	Կուրսկի բիոֆաբրիկա – ֆիրմա «ԲԻՈԿ» պետական դաշնային կազմակերպություն
250.	Իմունոքրոմատոգրաֆիայի եղանակով կատաղության վիրուսի յուրահատուկ հակաձնի հայտնաբերման թեսթ-համակարգ	Ռուսաստանի Դաշնություն	«Էպպլոգեն» կազմակերպություն
251.	Խոզերի Աուեսկի հիվանդության նկատմամբ կենդանի Աուֆիլ Պլուս (AUPHYL® Plus) պատվաստանյութ	Հունգարիա	«Մելա-Ֆիլաքսիա Վետերինարի Բիոլոջիկալս Կոմպանի Լտդ.» կազմակերպություն
252.	Իմունոֆերմենտային անալիզի մեթոդով գլուղատնտեսական կենդանիների (ԽԵԿ, ՄԵԿ, խոզ, ձի, ուղտ) արյան շիճուկում խլամիդիա տեսակի մանրէների Chlamidia յուրահատուկ G խմբի հակամարմինների հայտնաբերման թեսթ-համակարգ	Ռուսաստանի Դաշնություն	«Սիբբիոտեստ» գիտա-արտադրական կազմակերպություն
253.	Թռչունների Մարեկ հիվանդության նկատմամբ կենդանի Պուլվակ Մարեկ ՄՎԻ+ՀՎՏ (Poulvac Marek CVI+HVT) պատվաստանյութ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	«Չոետիս Ինկ.» կազմակերպություն

**2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող**

**տասներորդ օրը:**

**Նախարար՝**

**Ի. Առաքելյան**